ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY
VANADZOR OFFICE

2001 Հայաստանի Հանրապետություն,
Վանաձոր Տիգրան Մեծի պողոտա 59
59 Tigran Metsi st.
Vanadzor, 2001, Republic of Armenia
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68
Fax (ֆաքս) (374 322) 4 12 36
E-mail: hcav@hcav.am

Ե/2016- 25.06/326
25.06.2016թ.

ՀՀ գլխավոր դատախազ
Գ. Կոստանյանին

Պատճենը՝ ՀՀ հատուկ քննչական ծառայության պետ
Վ. Շահինյանին

Հարգելի գլխավոր դատախազ,

Հայտնում եմ Ձեզ այն մասին, որ 2016թ. հունիսի 25-ին ժամը 11:00-ի սահմաններում ՀՀ Գյումրի քաղաքի կենտրոնական հրապարակի մոտակայքից ոստիկանության մի խումբ աշխատակիցներ, մոտեցել են նույն վայրում կանգնած Շահեն Շանթի Հարությունյանին և անօրինական ձևով, առանց որևէ հիմնավորում ներկայացնելու և ներկայանալու թևերը ոլորելով առևանգել են: Շահեն Հարությունյանին նստեցրել են սպիտակ գույնի 33FF330 պետհամարանիշի ավտոմեքենան և դուրս եկել Գյումրի քաղաքից, ուղևորվելով դեպի Լոռու մարզ տանող ավտոճանապարհը: Հասնելով Սպիտակ, Շ. Հարությունյանին տեղափոխող ավտոմեքենան շարժվել է դեպի Երևան: Հասնելով Երևան ոստիկանության աշխատակիցները իրենց կողմից առևանգված Շ. Հարությունյանին տեղափոխել են ՀՀ ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի 6-րդ գլխավոր վարչություն առանց վերջինիս բացատրելու, թե ինչի համար են իրեն առևանգել և տեղափոխել ոստիկանություն:

Այսպիսով, 2016թ. հունիսի 25-ին ժամը 11:00-ի սահմաններում ոստիկանության աշխատակիցները ակնհայտորեն դուրս են եկել իրենց լիազորությունների շրջանակներից, կատարել են բացահայտ հանցագործություն՝ քաղաքացուն Գյումրի քաղաքի կենտրոնական հրապարակից առևանգելու միջոցով:

Հիմք ընդունելով վերոգրյալը, դիմում եմ Ձեզ, անհապաղ միջոցներ ձեռնարկել և դադարեցնել Շահեն Հարությունյանի նկատմամբ կատարվող ապօրինի գործողությունները, ակնհայտ հանցագործություն կատարած ոստիկանության աշխատակիցների և վերջիններիս հրաման տված անձանց նկատմամբ հարուցել քրեական գործ և վերացնել Շահեն Հարությունյանի իրավունքների և ազատությունների խախտումները:

Հարգանքով
կազմակերպության նախագահի՝ Ս.Օհանյան

Կատարող՝ Անի Չատինյան
էլ հասցե՝ achatinyan@hcav.am
հեռ.՝ 093-81-92-75